

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Գլոբմեդ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մատենցյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **7,790,000 (յոթ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ձեռք բերվող ապրանքները հանդիսանում են հիմնական միջոց, որոնց համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **730** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալով՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:


8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաթշկական վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Ը 900013001152
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



ՎԱՃԱՌՈՂ

«Գլոբմեդ» ՍՊԸ
Բրյուսովի 212., բն 57
«Ակբա Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Ը 220533330431000
ՀՎՀՀ 02643743
Տուրքն



ՏԵԽՆԻԿԱԿԱԼ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագրեր	ԱՊՐԱՆՔԱՏԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԳՐՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՐԱՆ ԵՐԿԻՐ
1.	<p>Ուլտրաձայնային /անդրաձայնային/ թվային ամրակալված էխոգրաֆ/տոնոգրաֆ/ (համալրված 2 տվիչներով)</p>	<p>1. Կիրառությունը՝</p> <ul style="list-style-type: none"> - ներորովայնային /Abdomen/ - Գինեկոլոգիա /Gynecology/ - Սրտաբանություն /Cardiology/ - Փոքր օրգաններ /Small parts/ - Ուրոլոգիա /Urology/ - Անոթներ /Vascular/ - Արտակարգ իրավիճակների բժշկություն /Emergency Medicine/ - Նյարդային /Nerve/ - Օրթոպեդիկ <p>2. Կիրառվող տվիչների տեսակները /Transducer types/</p> <ul style="list-style-type: none"> - Կոնվեքս /Curved array transducer/ - Գծային /Linear array transducer/ - Ֆազային /Փուլային / Phased array transducer/ - Ծավալային /4D Volume transducer/ <p>3. Ավանդվող բնութագրեր /Overview/</p> <ul style="list-style-type: none"> - Հարստացված-էխո ճառագայթում /Echo-enriched Beamforming/ - 27648 կանալներով - 4 ճառագայթների ձևավորումը /4-beamforming/ - Համակարգի սկզբնական միացման ստորությունը /Boot-up from complete shut-down/ մոտ 46 վրկ / ստանդարտ ծրագրային ապահովմամբ 25 վրկ./; անջատման ստորությունը Shut-down/ 19 վրկ. - Օգտագործողի որոշմամբ >140 նշաններ /bodymarks/ զանազան հետազոտությունների համար: <p>3.1 Մոնիտորը /Monitor</p> <ul style="list-style-type: none"> - Բարձր լուծանելիության, գունավոր ԼԵՂ, 17", անկյունագծով, թեքվող հորիզոնական առանցքի շուրջ 110 աստիճան և շրջվող ուղղահայաց առանցքի շուրջ 180 աստիճան / -90 մինչև 90 աստիճան/ - Կարդերի հաճախությունը : 60<9 - Պայծառության և կոնտրաստի թվային կարգավորումներով: - Դիտարկման անկյունը : 178 աստիճան ձախ/աջ և 178 աստիճան վերև/ներքև. - Լուծանելիությունը: 1280*1024 <p>3.2. Ղեկավարման վահանակը /Control panel</p> <ul style="list-style-type: none"> - Դիքի կարգավորումով ղեկավարման վահանակ /Independent up/down of control panel facilitates optimal positioning/ : 150մմ. – ուղղահայաց տեղաշարժով: - Լուսավորվող սեղմակոճակներով: - 4 ծրագրավորված սեղմակոճակներ /Programmable keys available for user-defined functions/ - 8-սեգմենտանոց /8-segment TGC control / ղեկավարման վահանակ - Ամբողջական, լուսավորվող ստեղծակոճակներով ստեղծաշար /Full-sized, backlit QWERTY keyboard/ - Զգայունություն կարգաբերումով/Trackball 	DC-30	Mindray	Չինաստան

- 3.3. Այլատիկ հզորության կարգաբերում, ելքային հզորության չափում բոլոր ռեժիմներում
- 3.4. Ուժեղացման գործակցի ազատորեն կարգաբերում հետազոտման տիրույթում, գրաֆիկական պատկերումով
- 3.5. Հետազոտությունների մենեջմենտի ծրագրային ապահովման փաթեթ / Exam management /
- 4. Գործառույթները և պատկերների ձևավորման ռեժիմները / Imaging modes, features/**
 - B-ռեժիմ /B-Mode/
 - Հյուսվածքային Հարմնիկ /THI/ և PSH (Փուլային շերտով հյուսվածքային հարմնիկա/ M-ռեժիմ /M-Mode/; Գունավոր M-ռեժիմ /Color M-mode /; Անատոմիական M-ռեժիմ /Anatomical M-mode
 - Գունավոր Դոպլեր /Color Doppler Imaging/ ; Գունավոր+ B-ռեժիմ / Color+ B-Mode/
 - Էներգետիկ Դոպլեր /Power Doppler Imaging/ և Ուղղորդված Էներգետիկ Դոպլեր /Directional Power Doppler Imaging /PDI/
 - Բաբախող Ալիքային Դոպլեր /Pulsed Wave Doppler/ և Բաբախող Ալիքային Դոպլեր+ Գունավորում /Pulsed Wave Doppler+C
 - Հյուսվածքային Դոպլեր TDI ներառյալ TVI, TVD, TVM, TEI /TDI (Include TVI, TVD, TVM, TEI)/
 - Շարունակական Ալիքային Դոպլեր /Continuous Wave Doppler/ և Շարունակական Ալիքային Դոպլեր + Գունավորում /Continuous Wave Doppler+C/
 - Ավտոմատ միոկարդի հնտինայի չափում /Auto IMT/
 - Հաճախականությունների խառնուրդային պատկերում /FCI (Frequency Compound Imaging)/
 - Պատկերի թեքում /B steer/
 - ԷՍԳ /Էլեկտրաստագրում /ECG/
 - Պատկերների ավտոմատ օպտիմալացում /Auto Image Optimization/iTouch
 - Ընթացիկ ժամանակում պանորամային պատկերում / Real time panoramic imaging/iScape™
 - Լրիվ Էկրանի վրա պատկերում /Full Screen Zoom/iZoom™
 - Հում տվյալների մշակում /Raw data processing/ Raw Data
- 5. Գործառույթները և պատկերների ձևավորման առանձին պատկերով հնարավոր, ընտրովի /optional/ ռեժիմները`**
 - Ձեռքով ազատ ծավալային պատկերում /Smart 3D™ (freehand 3D)/
 - Նյարդային փաթեթ /Nerve package/
 - Ձեռքով ազատ ծավալային պատկերում /Smart 3D™ (freehand 3D)/ - հնարավոր է պատկերի դեպքում
 - 4D - հնարավոր է պատկերի դեպքում
 - Բիոպսիայի ուղղորդիչներ /Biopsy Guide/
 - Արտակարգ իրավիճակների բժշկության փաթեթ /Emergency Medicine package/
 - Կլինիկական չափումների փաթեթ /Clinical Measurement Package/
 - Ոչ գծային կոնտրաստավորումով պատկերում / UWN /Ultra wideband non-linear contrast imaging/
 - Բնական հայտնային էլաստոգրաֆիա /Natural Touch Elastography/
 - Պանորամային պատկերում /Panoramic Imaging /Real time Panoramic Imaging/
- 6. Ներկայացվող պատկերների և տվյալների քննադրելի պարամետրեր /Imaging Parameters/**
 - B- ռեժիմ /B-mode/
 - (B), (B+B), (4B)
 - Տարածային կարողացվածքային պատկերավորում /Spatial Compound Imaging/ iBeam™
 - Ներառուկների ճնշումով պատկերում /Speckle Suppression Imaging: iClear™
 - Պատկերների ավտոմատ օպտիմիզացիա /Auto Image Optimization/iTouch™

- Հաճախականությունների խառնուրդային պատկերում /FCI (Frequency Compound Imaging)/

- B ռեժիմում պատկերի թեքում /B steer/

- Տեսարձաշտի լայնացում /Extended Field of View/

- հորիզոնական կոնվենսացում /TGC/

- Աքսոնալորման գծերի ուժեղացման կարգավորում /LGC/

- Տեսողական դաշտի կարգավորում /FOV/

- Կրկնողություն/Persistence/

- Հորիզոնական սանդղակի ներկայացում /Horizontal Scale/

- Շրջումներ /L/R flip and U/D flip/

- Պտույտներ /Rotation/

- Հյուսվածքային սպեցիֆիկ պատկերում /TSI/

- Գրոշ քարտեզավորում /Gray Map/

- Գունավոր քարտեզավորում /Tint map/:

- Ավտոմատ միավորում /Auto merge/

- Միջնագծի ներկայացում/Middle Line/

- M-ռեժիմ /M-mode/:

- Դիսիլեյի կարգավորվող ֆորմատներ /Display formats/

- Մեղմացում /soften/

- Սկիզբավորման արագության կարգաբերում /sweep speeds/

- Գունավոր M-ռեժիմ /Color M-mode/

- Գունավոր քարտեզավորում /Tint map/:

- Գրոշ քարտեզավորում /Gray Map/

- Եզրագծերի ուժեղացում /Edge enhance/

- Անատոմիական M-ռեժիմ

- Դիսիլեյի ֆորմատների կարգավորում /Display formats/

- Գունավոր ազատ /Color Free/

- Վերանշակման արագության կարգաբերում/Sweep speeds/

- Գունավոր քարտեզավորում /Tint map/:

- Գրոշ քարտեզավորում /Gray Map/

- Գունավոր Դոպլեր /Color Doppler Imaging/

- Համատեղ պատկերում /Dual live

- Ելքային ակուստիկ հզորության կարգավորում /Acoustic output power/

- Արագության սանդղակ ներկայացում /Scale/

- Բազային գծի ներկայացում /Baseline/

- Հստակ /Wall filter/

- Հարթեցում /Smooth/

- Համատեղ B/C

- Գունավորման սանդղակի ներկայացում.

- Գունավոր քարտեզավորում /Color map/

- Փոխակերպում /Invert/

- Կրկնողություն/Persistence/

- Գծերի խտության կարգավորում /Line density/

Էներգետիկ Դոպլեր /Power Doppler Imaging/

- Համատեղ պատկերում /Dual live
- Ուղղորդված էներգետիկ Դոպլերի սատարում /Support directional power Doppler/
- Ակուստիկ ելքի կարգավորում /Acoustic output power/
- Դինամիկ տիրույթի կարգաբերում /Dynamic range/;
- Սանդղակը ներկայացում /Scale/
- Ջտում /Wall filter/
- Հարթեցում /Smooth/
- Համատեղ B/C
- Նախընտրության տուկտի կարգավորում /Priority/
- էներգետիկ Դոպլերի գունավորման քարտեզ /map/
- Ուղղորդված էներգետիկ Դոպլերի գունավորման քարտեզավորում
- Կրկնությունը /Persistence/
- Գծերի խտության ընտրություն /Line density/:
- PW/CW-Mode
- Դիսիլեյի ֆորմատների կարգավորում /Display formats/
- Համատեղ պատկերավորում՝ Դուպլեքս/տրիպլեքս /Duplex/Triplex/
- PW կարգավորվող սանդղակ ներկայացում/Scale/ PW
- CW կարգավորվող սանդղակ/Scale/ PW
- Պատկերի թեքում / PW steer /
- Բազային գիծ ներկայացում/Baseline/
- Դինամիկ տիրույթի կարգաբերում /Dynamic range/
- Հետազոտվող նուշի ծավալների չափում /Sample volume size/
- Հետազոտվող նուշի խորության չափում /Sample gate dpth/
- Մակարդակի կարգավորում /Volume/,
- Սլիպավորման արագության կարգաբերում /Sweep speed/
- Ջտում /Wall filter/
- Փոխակերպում /Invert/
- Անկյան ուղղում /Angle correction/
- Արագ անկյունավորում /Quick angle/:
- Գորշ քարտեզավորում /Gray Map/
- Գունավոր քարտեզավորում /Tint map/:
- Ավտոմատ հաշվարկ /Auto calc/
- Պատկերների ավտոմատ օպտիմալացում /Auto Image Optimization/iTouch™
- Բաբայիների բարձր հաճախության և էներգետիկ պատկերում /TVI/TEI (Tissue Velocity/EnergyImaging/
- Համատեղ պատկերում /Dual live: side by side displays B and B+TVI/
- Հետաքրքրող տիրույթի տեղակայում /ROI size/position/: կարգավորվող /adjustable/
- Արագությունների սանդղակ /Scale/
- Բազային գիծ /Baseline/
- Դինամիկ տիրույթի կարգաբերում /Dynamic range/
- Ջտման /Wall filter/
- Հարթեցում /Smooth/
- Համատեղ B/C

- Հյուսվածքների արագության քարտեզավորում /IVI maps/
 - Հյուսվածքների էներգետիկ քարտեզավորում /TEI maps/
 - Փոխակերպում /Invert/
 - Կրկնողական/ Persistence/
 - Գծերի խտության ընտրություն /Line density/
 - Հյուսվածքային արագության Դոպլեր TVD (Tissue Velocity Doppler)/
 - Դիսփիլեյի ֆորմատների կարգավորում /Display formats/
 - Հետազոտվող նմուշի ծավալների չափում /Sample volume size/
 - Հետազոտվող նմուշի խորության չափում /Sample gate depth/
 - Կարգավորվող արագությունների սանդղակ /Scale/
 - Բազային գիծ /Baseline/
 - Դինամիկ տիրույթի կարգաբերում /Dynamic range/
 - Մակարակի կարգավորում /Volume/:
 - Վերանշակման արագության կարգաբերում /Sweep speed/
 - Հստում /Wall filter/
 - Փոխակերպում/ավտոմատ փոխակերպում /Invert/Auto invert/
 - Անկյան ուղղում /Angle correction/
 - Արագ անկյունավորում /Quick angle/:
 - Գորշ քարտեզավորում /Gray Map/
 - Գունավոր քարտեզավորում /Tint map/:
 - Արտասկանի շարժումների դրափեյլային հետազոտություն TVM (Tissue Velocity Motion)/
 - Դիսփիլեյի ֆորմատների կարգավորում /Display formats/
 - Դինամիկ տիրույթի կարգաբերում /Dynamic range/
 - M սվիչավորման արագության կարգաբերում /Sweep speed/
 - M մեղմացում /soften/
 - Գորշ քարտեզավորում /Gray Map/
 - Գունավոր քարտեզավորում /Tint map/:
 - Եզրագծերի ուժեղացում
 - Խոշորացում /Zoom/Zoom™
 - նորմալ պատկեր /normal image/, ստանդարտ /zoom standard area/, խոշորացում միայն պատկերի մասի /zoom only image area/
- 7. Գործընթացներ /Processing/**
- 7.1. Կինոնկարահանում /Cine review
 - Հնարավոր է բոլոր ռեժիմներում /Available in all modes/
 - Հիշողության առավելագույն ծավալը /cine memory/ 12394 կադր կամ 181 վրկ.
 - Կարդերի համեմատության նպատակով երկու ֆորմատներով ցուցադրում /displays one cine in dual format and allows frame by frame compare side by side/
 - Պատկեր/ կինո համեմատություն / Image/cine compare/ 2D/Color/Power/TDI ֆայլերի համար առավելագույնը 2
 - 7.2 Հում տվյալների մշակում /Raw data, Post Processing/Raw Data
 - Հնարավոր է B, M, C u. PW ռեժիմներում /Available in B, M, C, PW modes/
- 8. Չափումներ, վերլուծություններ և հաշվարկություններ /Measurement/Analysis and Report**
- 8.1 Ընդհանուր չափումներ /Generic measurements
 - 2D –ռեժիմներում /2D-mode/

Depth; Distance; Angle; Area: Ellipse, Trace, Spline, Cross; Trace Length; Double Distance; Parallel; Volume: 3-Distance, Ellipse +Distance); Length Ratio; Area Ratio; IMT; B Histogram; B Profile; Volume Flow; Color Velocity

M – ռեժիմում /M-mode

- Distance; Time; Slope; Heart Rate; Velocity
- Դոպլեր ռեժիմում /Doppler mode
- D Velocity; Time; Heart Rate; Acceleration; D Trace; PS/ED; Volume Flow;
- Automatic Doppler Spectrum Analysis: Heart cycle pre-settable ; Automatic real-time and retrospective tracing; User configurable display of items; Support PI, RI, TAMAX, TAMEAN, Volume Flow calculations; Appropriate factory settings; according to applications
- 8.2. Կլինիկական չափումների փաթեթներ /Clinical measurement package/
- Որովայնային /Abdominal
- Սրտաբանական /Cardiology: LV Function: Teichholz, Cube, Gibson, Simpson Single-plane, Simpson Bi-plane, Modified Simpson, Bullett, S-P Ellipse, B-P Ellipse; Auto LV: auto measurement in Simpson method; LV Mass: Area-Length Method, Truncated-Ellipsoid Method, Cube Method; Atrial Volume: LA Vol(A-L), LA Vol(Simpson), RA Vol(Simpson); LVIMP; LV TEI, RV TEI; Qp/Qs; PISA MR, AR, TR, PR; MVA(VTI), AVA(VTI); MV medial/lateral (TDI)
- Ուրոլոգիական /Urology
- Անոթային /Vascular
- Փոքր օրգաններ /Small Parts
- Օրթոպեդիական /Orthopedics
- IMT

9. Հետազոտությունների պահպանում և օգտագործում /Exam Storage and Management

- Կոշտ սկավառակի ծավալը 1TB /hard drive/, 726 GB ներքին /internal hard drive/ հետազոտվողների տվյալների պահպանման համար
- 248149 առանձին կարգերի պահպանման հնարավորություն
- Թվային տվյալների ուղղակի պահպանում /Direct digital storage/առանձին կարգերի և 2D կինոների, գունավոր և դրավերոգրաֆիայի /color and Doppler/.
- Հետազոտվողի տվյալների ղեկավարում /workstation dedicated for patient exam management/
- Հետազոտման հարցում/պատասխան /Patient exam query/retrieve/
- Աջակցություն ընթացիկ և անցյալ հետազոտությունների /Support review of current and past exam/
- Արխիվացրած հետազոտությունների և պատկերների չափումների և հաշվարկների աջակցություն /Support measurements and calculations on archived exam and images/
- Պատկերների հարդրում /Export images/ BMP/JPG/TIFF/DCM/AVI ֆորմատներով
- Պահպանում և հարդրում USB, DVD-RW

10. Պարտադիր պահանջվող տվիչներ /Transducers

- Կոնվեքս /Curved array/ 35C50P
- Կիրառությունը /Application/: Abdomen, OB/GYN, Vascular
- Հաճախականության տիրույթը /Bandwidth/: 1.7~6.0 ՄՀց
- Շառավիղը /Convex Radius/: ` 50մմ

Չճային / Linear /

7L4P

- Կիրառություն: Application: Small organ, Vascular, Orthopedics, Musculo-skeletal, Nerve, Pediatric
- Հաճախականության տիրույթը /Bandwidth/ 3.7-13.1 ՄՀց, էլեմենտների թիվը 128
- Ռիտարկման տիրույթը /Field of View/ : 38մմ.

11. Ֆիզիկական բնութագրեր /Physical Specification

էլեկտրամետրումը ստանդարտ ցանցից

- Լարումը : 220+/- 10%, ՎԱ
- Հաճախականությունը : 50 Հց
- Ցանցից սպառող հզորությունը 420VA
- Ենթադրված վերալիցքավորվող մարտկոցից 6500mAh ունակությամբ

2այինը և բաշը

- Խորությունը : 670մմ
- Լայնությունը : 520մմ
- Բարձրությունը նվազագույն և առավելագույն : 1265-1415 մմ.
- Քաշը ` 55 Kg.

12. Օգտագործողի ինտերֆեյս /User Interface/

Տվիչների միացում և տեղակայում /Probe port and holder/

- Միաժամանակ միացվող տվիչների վարդակների /Probe ports/ 3
- Տվիչների հենատեղերի /Probe holder/ 3

Ցանցային միացումներ

- Մալուխային /Cable connection/
- Առանց մալուխների /Wireless connection/: ներկաուցված
- 1TB կոշտ սկավառակ /hard drive/
- DVD R/W driver
- 7 USB ports /3+4/

Բազային DICOM /basic/

- Verify (SCU, SCP)
- Print
- Store
- Storage Commitment
- Media Exchange

13. Պահանջվող պերիֆերիկ սարքեր և արձեստարներ

- Ունենալ մեկ ֆունկցիայով

14. Շրջակայքի պայմանները

Շահագործման պայմաններ

- Ջերմաստճան /Ambient temperature/: 0-40 °C
- Հարաբերական խոնավություն /Relative humidity/: 30%-85%
- Մթնոլորտի ճնշում /Atmospheric pressure: 0.7-1 ատմ..

Պահեստավորում և տեղափոխում

- Ջերմաստճան -20- +55 °C
- Հարաբերական խոնավություն: 30%-95%

Գիշեր ներառում է՝ մատրակարում և երաշխիք 24 ամիս շահագործման ձեռնարկում նշված պայմաններ չխախտելու պարագայում:


<p>4. Թթվածնային կոնցենտրատոր</p>	<p>Խտւելաբը շարժական է, չորս սերպակա առասպէր շուրջ շրջվող ապարի վրա. Թթվածինը արտադրվում է սենյակում գտնվող օդից: Սալքը համալրված է լրացուցիչ թթվածնի հոսքի կարգավորիչով 0-15լ/ր: ներկառուցված խոնավացուցիչով և աշխատաժամերի հաշվիչով Տեխնիկական բնութագրերը՝</p> <ul style="list-style-type: none"> - Արտադրվող թթվածնի խտությունը 93+/-3% տիրույթում, կախված հոսքի մեծությունից - Առավելագույն արտադրողականությունը 5լ/ր. - Ելքային ճնշումը 0.5ատմ. /վթնորտայինին գերազանցող/ - Աշխատանքի ժամանակ արմուկը չի գերազանցում 45դ Բ. Սահմանը: Սալքի ֆիզիկական բնութագրերը՝ - Մնուցումը ստանդարտ էլեկտրասնունցման 220Վ, 50Հց. ցանցից: - Ցանցից սպառողիզորությունը առավելագույնը 300Վտ. - Արտաքին չափերը՝ L/39*Խ/23*Բ/60սմ. - Քաշը 14.2կգ. - Պաշտպանության դասը՝ 2ա՝ <p>Գրիւը ներառում է՝ մաքրակարում և երաշխիք առնվազն 24 ամիս շահագործման ձեռնարկում նշված պայմանները չխախտելու պարագայում:</p>	<p>M 50</p>	<p>SisMed</p>	<p>Չինաստան</p>
--	---	-------------	---------------	-----------------

Ծանոթություն.

Ձեռք բերվող ապրանքատեսակները հանդիսանում են հիմնական միջոց: Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

Ապրանքները պետք է ունենան.

1. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
 - *թիվ 1,2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ Մատակարարման վայր սահմանելի ք. Արվյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:



ԳՆՈՐԴ
 ՀՀ պաշտպանության նախարարություն
 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

«Գլոբմեդ» ՍՊԸ
 տնօրեն

ՎԱՃԱՌՈՐ



ԳՆՄԱՆ ՔԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Ձ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդամուր գումարը (ՀՀ դրամ)	Գնման ժամանակացույց՝ 2019թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ
1.	Ուտորաձայնային /անդրաձայնային/ թվային անրավայրված էլիտրաֆ /տնտրոգրաֆ/ (համալրված 2 տվիչներով)	հատ	1	5,630,000	5,630,000	1
4.	Թթվածնային կոնցենտրատոր	հատ	8	270,000	2,160,000	8
ԸՆԴԱՄԵՆԸ					7,790,000	

Ձափման միավորը՝ հատ, վերաբերում է տեխնիկական բնութագրում նկարագրված սարքի և բաղկացուցիչ մասերի ամբողջությամբ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/15-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ՔԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդամուր գումար /ՀՀ դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ., համապատասխան աֆիսների այդ թվում	
				տեյմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.19թ.
1.	Ախտորոշման գերձայնային (էխո), ուլտրաձայնային և ռոպլեր սարքեր/ Ուտորաձայնային /անդրաձայնային/ թվային անրավայրված էլիտրաֆ /տնտրոգրաֆ/ (համալրված 2 տվիչներով)	33111340/4	5,630,000	5,630,000	5,630,000
4.	Թթվածնի մատակարարման սարք /Թթվածնային կոնցենտրատոր/	33151280/2	2,160,000	2,160,000	2,160,000
ԸՆԴԱՄԵՆԸ			7,790,000	7,790,000	7,790,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ



ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

«Գլոբետե» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՐ

Ս. Մ. Բ. Արմենյան

Վ. ՄԱՐԿԵՆՅԱՆ



Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
« » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական ընտրության համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն